Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր՝ գիտ. Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«05» 09 20/1 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐԻ

Համալսարանի ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների անմիջական ղեկավարումն իրականացնում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին աշխատանքի է նշանակում և ազատում ռեկտորը, նրա թեկնածությունը հիմնադիր անդամների ընդհանուր ժողովում երաշխավորություն ստանալուց հետո:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հիմնական գործառույթներն են՝

1. Դիմորդների ընդունելության քննությունների կազմակերպումն ու անցկացումը:
2. Ուսանողների փոխադրման և վերականգնման հսկողությունը:
3. Դասացուցակների, քննությունների, ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների ստեղծումը և հսկողությունը:
4. Ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման հսկողությունը:
5. Պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածության հսկողությունը:
6. Դասախոսությունների, լաբորատոր, գործնական աշխատանքների, սեմինարների որակի հսկողությունը:
7. Հաստիքային և ժամավճարային ֆոնդի ռացիոնալ օգտագործումը:
8. Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության մասնակցության և նրանց որակավորման բարձրացման հսկողությունը:
9. Գրադարանի գործունեության հսկողությունը:
10. Դիպլոմների հանձնման հսկողությունը:
11. Կենտրոնական մեթոդական հանձնաժողովի գործունեության ղեկավարումը և առարկայական մեթոդական հանձնաժողովների աշխատանքի հսկողությունը:
12. Նախապատրաստական բաժանմունքի աշխատանքի կազմակերպումը:
13. Դեկանատների աշխատանքի հսկողությունը:
14. Տեխնիկական մեթոդների ուսուցման ներդրումը:
15. Համալսարանում ուսումնամեթոդական գրականության պատրաստման և հրատարակման հսկողությունը:
16. Ամբիոնի վարիչների պարտականությունների կատարման հսկողությունը: